2013 call for entries announced: **Տուն բոլորի համար**



poster for tomorrow

2013թ. Պաստառ հանուն վաղվա.

Տուն բոլորի համար

Վայր, որտեղ ոչ միայն քնում ես, այլ ապրում:

«Տուն»-ը յուրաքանչյուրիս համար տարբեր նշանակություն ունի: Ոմանց համար այն մի վայր է, որտեղ մեծացել ենք կամ ապրում ենք տվյալ ժամանակահատվածում, վայր, ուր եկել ենք աշխատանքից հետո ընկերների հետ հանգստանալու կամ զվարճանալու:
Սակայն շատ շատերի համար տունը երազանք է, մի վայր որին ձգտում են, մինչ փողոցում քնելով փորձում են գոյատևել և այլ տեղ չունեն գնալու:

Այսպես չպետք է, որ լինի:

Միացյալ Ազգերի Կազմակեպությունն ամրագրել է **յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի ապրելու վայր ունենալու իրավունքը:** Մի վայր, որտեղ ոչ թե կպատսպարվես, այլ կապրես ապահով, պաշտպանված, «խաղաղ և արժանապատիվ» կյանքով:

Կտեղադրվի, որպես կանոն, հիմնական կարճ նկարագրությունը, սակայն փետրվար ամսից սկսած յուրաքանչյուր ամիս մենք կտարածենք նոր նկարագրություններ, որոնք ուղղված կլինեն հիմնախնդրի տարբեր կողմերի լուսաբանմանը՝ պատճառներ, փաստեր, հետևանքներ և լուծումներ: Սակայն այս պահին, ձեր ուշադրությանն ենք հրավիրում կենտրոնանալ միայն տուն ունենալու իրավունքի վրա:

Ուղերձ
Մենք բոլորս արժանի ենք տուն ունենալու

Նկարագրություն
Տունը ավելի լավ ապագա ունենալու սկիզբն է

Կցանկանանք, որպեսզի դուք մտածեք «տուն» երևույթի բաղկացուցիչ մասերի մասին. այն ավելին է քան չորս պատը և առաստաղը: Ինչպիսի՞ն է այն միլիոնավոր մարդկանց աչքերում, ովքեր ապրում են փլատակներում, ժամանակավոր կացարաններում կամ փողոցում: Նրանք տունը տեսնում են, որպես մի հնարավորություն՝ անտուն ապրելու երկարատև շղթան կոտրելու համար, փախչելու աղքատությունից, դառնալու հասարակության լիիրավ անդամ և ապրելու բարեկեցիկ կյանքով՝ չանհանգստանալով այն մասին, թե որտեղ են քնելու կամ ինչ վտանգի կհանդիպեն դրսում քնելով:

Անտուն լինելու և վատ պայմաններում ապրելու պատճառներն անվերջ են՝ աղքատություն, անհաջողակություն, հոգեկան առողջություն, լքվածություն, հարաբերություններ, տնային բռնություն, սակայն անկախ նրանից այս խնդիրներն անձնական են թե հասարակական, լուծումը միակն է՝ տունը:

Հարկավոր է այս խնդրին ուշադրություն դարձնել ավելին քան երբևէ՝ հաշվի առնելով այն փաստը, որ 2013 թ.-ին քաղաքներում ավելի շատ մարդ է բնակվում քան երբևէ և առկա տնտեսական ճգնաժամը: Այս հիմնախնդրին դժվար է սահմանում տալ և միանգամից լուծում տալ:

Կարևոր չէ, թե ինչու են մարդիկ անտուն, **կարևորն այն է, որ նրանք իրավունք ունեն տուն ունենալու և նոր կյանք կառուցելու հնարավորություն:**

poster for tomorrow

Մրցույթի օրացույցը

Մարտի 10՝	հայտերի ներկայացման հայտարարություն
Հուլիսի 10՝	հայտերի ներկայացման վերջնաժամկետ
Հուլիսի 20՝	առցանց ժյուրիր աշխատանքների սկիզբ
Սեպտեմբերի 10՝	առցանց ժյուրիի աշխատանքների ավարտ
Հոկտեմբերի 10՝	ժյուրին. աշխատքներ Փարիզում
Դեկտեմբերի 10՝	համաշխարհային ցուցահանդեսի բացում

GOT A QUESTION? PLEASE GET IN TOUCH!

4TOMORROW ASSOCIATION
RUE MYRHA 8, PARIS 75018, FRANCE
T. +33 153 4141 51

INFO@POSTERFORTOMORROW.ORG
WWW.POSTERFORTOMORROW.ORG

FACEBOOK.COM/POSTER4TOMORROW
TWITTER @POSTER4TOMORROW
SKYPE POSTER4TOMORROW